ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Զարգացման ինգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ

2-րդ նիստի օրակարգ

Ք.Չարենցավան, 07.04.2023

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը:

Նիստի օրակարգում համայնքապետարանի Տարեկան աշխատանքային պլանի նախագիծն էր:

Նիստին ներկա էին ԽՄ անդամներ՝ Գևորգ Հակոբյանը, Համլետ Խալաթյանը, Մարինե Հարությունյանը, Քրիստինե Ղազարյանը, Ալեքսանդր Վիրաբյանը, Վարդան Գալեչյանը,Աշոտ Ծերունյանը:

Համայնքապետարանի Զարգացման ծրագրերի և ՏՏ բաժնի պետ Աշոտ Ծերունյանը ներկայացրեց Տարեկան աշխատանքային պլանի նախագիծը:

Օզանլար թաղամասի ներկայացուցիչները ներկայացրին իրենց խնդիրները՝ չկա ջուր, ճանապարհ, լուսավորություն, առաջարկեցին դրանք ներառել ՏԱՊ-ում: Այս թաղամասում 6-7 ընտանիք է մշտապես բնակվում:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանն ասաց, որ կքննարկեն լուսավորության հարցը, շարունակաբար նաև մյուս հարցերը կլուծեն:

Գևորգ Հակոբյանն ասաց, որ ուզում է համատիրությունների հարցը քննարկել:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանն ասաց, որ եթե անհրաժեշտությունը կա, մի ուրիշ օր կքննարկեն այդ հարցը, այսօրվա օրակարգում Տարեկան աշխատանքային պլանի նախագիծն է:

Վարդան Գալեչյանը բարձրաձայնեց Բջնիի գործարանի և Ավտոլիտ գործարանի կողքի շինաղբը վերացնելու հարցը:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանն ասաց, որ մի քանի մասնավոր աղբահանող ընկերություններ են հավանաբար այդտեղ թափում շինաղբը, պետք է հետևողական լինել, արձանագրել, տեղեկացնել իրենց, որ տուգանեն: Չնայած արդեն մի քանի անգամ զրուցել են այդ տնտեսվարողների հետ:

Համլետ Խալաթյանը բարձրացրեց ավտոտնակների հարց՝ ծառերը կտրվում են, ավտոտնակներ են կառուցվում:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանն ասաց, որ թույլտվությունները շատ վաղուց են տրվել, բայց մարդիկ այսօր են կառուցապատում, իսկ վերջին տարիներին նման թույլտվություններ չեն եղել:

Գևորգ Հակոբյանն առաջարկեց նախկին «բեսետկաները» վերածել խաղահրապարակների, կոնկրետ 2-րդ թաղամասի բնակիչներն ուզում են դա:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանն ասաց, որ համայնքապետարանում վաղուց քննարկում են այդ հարցը, արդեն նման նախագիծ կա, մնում է քննարկել «բեսետակները» քանդելու օրինական հիմքերը և փորձնական մեկը դարձնել խաղահրապարակ:

Մարինե Հարությունյանը բարձրացրեց ապաստարանների հարցը, նշեց, որ մաքուր վիճակում չեն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը պատասխանեց, որ ապաստարանների մեծ մասը բնակիչները վերածել են նկուղների, մնացածի մաքրության աշխատանքների պատասխանատուն համատիրություններն են ու բնակիչները:

Գևորգ Հակոբյանը տեղեկացրեց ներկաներին, որ իրենց նախաձեռնող խմբի դիմումին պատասխան «Գազպրոմ Արմենիա» ընկերությունը տեղեկացրել է, որ կներկի համայնքի գազատար խողովակները. տարեկան՝ 20 տոկոս:

ԽՄ նիստի անդամներն ընդհանուր առմամբ դրական գնահատեցին ՏԱՊ-ի նախագիծը:

Արձանագրող Սոնա Աթայան